ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139-20.08.2025-ՊԻ-011/0), «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[1]-20.08.2025-ՊԻ-011/0), «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[2]-20.08.2025-ՊԻ-011/0), «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[3]-20.08.2025-ՊԻ-011/0), «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[4]-20.08.2025-ՊԻ-011/0), «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[5]-20.08.2025-ՊԻ-011/0), «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[6]-20.08.2025-ՊԻ-011/0), «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[7]-20.08.2025-ՊԻ-011/0), «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[8]-20.08.2025-ՊԻ-011/0), «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[9]-20.08.2025-ՊԻ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[10]-20.08.2025-ՊԻ-011/0), «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[11]-20.08.2025-ՊԻ-011/0), «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[12]-20.08.2025-ՊԻ-011/0), «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[13]-20.08.2025-ՊԻ-011/0), «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության

մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[14]-20.08.2025-ՊԻ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[15]-20.08.2025-ՊԻ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139-20.08.2025-ՊԻ-011/0), «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[1]-20.08.2025-ՊԻ-011/0), «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[2]-20.08.2025-ՊԻ-011/0), «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[3]-20.08.2025-ՊԻ-011/0), «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[4]-20.08.2025-ՊԻ-011/0), «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[5]-20.08.2025-ՊԻ-011/0), «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[6]-20.08.2025-ՊԻ-011/0), «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[7]-20.08.2025-ՊԻ-011/0), «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[8]-20.08.2025-ՊԻ-011/0), «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[9]-20.08.2025-ՊԻ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[10]-20.08.2025-ՊԻ-011/0), «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[11]-20.08.2025-ՊԻ-011/0), «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[12]-20.08.2025-ՊԻ-011/0), «Հայաստանի Հանրապետությունում

ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[13]-20.08.2025-ՊԻ-011/0), «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1139.[14]-20.08.2025-ՊԻ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծերի փաթեթի ամբողջ տեքստում առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարություն», «կառավարություն» ձևակերպումները՝ իրենց հոլովաձևերով փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթը, որի համաձայն. «*Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ.*»:

2. Նախագծերի փաթեթի ամբողջ տեքստում առաջարկում ենք «ՀՈԴԱՎԱԾ» բառերը փոխարինել «Հոդված» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դրույթը, այն է. «*Օրենսդրական*

ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով: Հոդվածի համարից առաջ գրվում է «Հոդված» բառը.»:

3. Նախագծերի փաթեթում առաջարկում ենք, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանումը, Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտը հիշատակելիս օգտագործել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը:

4. «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասում առաջարկում ենք «աջակցության» բառից առաջ լրացնել «պետական» բառը՝ հիմք ընդունելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքի անվանումը:

5. «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք «սույն կետի» բառերը փոխարինել «սույն մասի» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթը, այն է. «*Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի.*»:

6. «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն. «*10. Ինքնավար մարմնի CERT թիմի անդամ չեն կարող լինել այն անձինք, ովքեր չեն համապատասխանում «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքով սահմանված տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջներին և սահմանափակումներին, ինչպես նաև ճանաչվել են սնանկ և ունեն չմարված (չներված) պարտավորություններ.*»:

Հարկ ենք համարում նշել, որ սահմանափակումներն այն հատկանիշներն են, որոնք պետք է բացակայեն: Սահմանափակումներին չհամապատասխանելը ենթադրում է, որ անձը չունի սահմանափակմամբ նշված հանգամանքները, ուստի համաձայն «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի անարգել կարող լինել Ինքնավար մարմնի CERT թիմի անդամ: Մինչդեռ «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 10-րդ մասում ձևակերպված դրույթում սահմանափակումներին չհամապատասխանելը սահմանված է որպես Ինքնավար մարմնի CERT թիմի անդամ լինելու արգելք: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերախմբագրել

«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 10-րդ մասում սահմանված դրույթը՝ «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի համապատասխան:

7. Հարկ ենք համարում նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում կարող է կիրառվել կա՛մ «և», կա՛մ «կամ» շաղկապը, մինչդեռ «և/կամ» գրելաձեւը կիրառելի չէ: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք վերանայել «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի ամբողջ տեքստում կիրառված և/կամ ձևակերպումները:

8. «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում առաջարկում ենք «(այսուհետ՝ Ինքնավար մարմին)» բառերը հանել, քանզի օրենքի հետագա տեքստում կիրառվելու է սահմանված հասկացությունը, այն է՝ «Ինքնավար մարմին»:

9. «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի մի շարք հոդվածներում կիրառվում է «հանրային տեղեկություն» հասկացությունը՝ համապատասխան հոլովաձևերով: Մինչդեռ «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «հանրային տեղեկություն» հասկացության համար սահմանվել է կրճատ տարբերակ, այն է՝ «(այսուհետ՝ տեղեկություն)»: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը վերանայել քննարկվող տեսանկյունից:

10. «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «անկախ և ինքնավար պետական մարմինները» բառերը փոխարինել «անկախ պետական և ինքնավար մարմինները» բառերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունները, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթը:

11. «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «15-րդ» թվից առաջ լրացնել «սույն օրենքի» բառերը՝ կիրառված հղման հստակությունն ապահովելու նպատակով: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 17-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված դրույթից, որի համաձայն. «*Օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են օրենսդրական ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը.*»:

12. «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «*4. Պետական տեղեկատվական համակարգի և դրան միացած տվյալների շտեմարանների շահագործման համար աջակցող համակարգերի հասանելիությունը և օգտագործումը պարտադիր է: Սույն հոդվածի 1-ին մասում նշված աջակցող համակարգերը պարտադիր չեն սույն օրենքի 14-րդ հեդվածի 4-րդ մասում նշված տվյալների շտեմարանների շահագործման համար.*»:

Հարկ է նկատել, որ «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված դրույթը նախատեսում է շտեմարանի կառավարման պատասխանատու մարմնի կամ անձի իրավական պարտավորություն, որը պետք է կատարվի նախքան տվյալների շտեմարանի ստեղծումը կամ տվյալների շտեմարանում հավաքագրված տվյալների կազմում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը կամ տվյալների շտեմարանի աշխատանքի դադարեցումը: Այն չի սահմանում տվյալների շտեմարանների տեսակներ, որոնց վրա հնարավոր լինի չտարածել աջակցող համակարգերի պարտադիր առկայության պահանջը: Ուստի առաջարկում ենք վերանայել «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 20-րդ հոդվածի 4-րդ մասում կատարված հղումը:

13. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*Օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում*»: Առաջարկում ենք «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի համասեռ հոդվածները «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորման համաձայն միավորել համապատասխան գլուխներում:

14. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է հանձնաժողովի ու կարգավորող և վերահսկող այլ մարմինների համագործակցության սկզբունքները, սակայն նույն մասի կետերով նախատեսվող կարգավորումները իրենց բնույթով «սկզբունք» չեն հանդիսանում: Սկզբունքները հիմնադրույթներ են, ղեկավար գաղափարներ, որոնք հետագայում անկյունաքարային են լինում նորմատիվ իրավական ակտում կարգավորումների նախատեսման և մեկնաբանման համար: «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսվում են ոչ թե սույն նկարագրին համապատասխանող գաղափարներ, այլ հանձնաժողովի ու կարգավորող և վերահսկող այլ մարմինների համագործակցությանը վերաբերող

կարգավորումներ: Վերոգրյալի լույսի ներքո առաջարկում ենք վերանայել «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող ձևակերպումները:

15. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ մասում կատարվող հղումը առաջարկում ենք շտկել, քանզի հղում է կատարվում «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 7-րդ մասին, մինչդեռ օրենքի նախագծում նման մաս բացակայում է:

16. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածով նախատեսվում են Հանձանաժողովի անդամի լիազորությունները դադարեցնելու կամ դադարելու վերաբերյալ կարգավորումներ, սակայն կասեցման վերաբերյալ՝ ոչ: Սակայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածով խափանման միջոցների թվին է պատկանում նաև պաշտոնավարման կասեցումը, և առաջացնում է Հանձանաժողովի անդամի լիազորությունները կասեցնելը անհրաժեշտություն առաջանալու օբյեկտիվ իրավիճակ: Առաջարկում ենք կարգավորումներ նախատեսել նաև Հանձանաժողովի անդամի լիազորությունների կասեցման վերաբերյալ:

17. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մասում առաջրկում ենք «այն մարմնին» ձևակերպումը փոխարինել «Կառավարությանը» բառով, իսկ «, որի առաջարկությամբ նախ նշանակվել է Հանձնաժողովի անդամ:» արտահայտությունը հանել, քանզի «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Հանձնաժողովի անդամի թեկնածու առաջադրելու իրավունքը պատկանում է միայն Կառավարությանը:

18. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողները համարվում են Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներ: Իսկ «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվող լրացման արդյունքում Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողները

համարվում են հանրային ծառայող: «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների համար ապահովվում է յուրաքանչյուր աշխատողի կոմպետենցիաների (գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի պարտադիր պահանջների ամբողջություն) շրջանակին համապատասխանող վարձատրություն՝ հաշվի առնելով «Հանրային տեղեկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Կիբեռանվտանգության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 19-րդ հոդվածով սահմանված կազմակերպությունների աշխատողների համադրելի կոմպետենցիաների համար աշխատանքի շուկայում վարձատրության միջին չափերը: Սույն մասում նշված կազմակերպությունների համադրելի կոմպետենցիաներով աշխատողների շուկայական վարձատրության վերաբերյալ տեղեկատվություն Հանձնաժողովը ստանում է հարկային մարմնից, որը տեղեկատվություն տրամադրում է Հանձնաժողովի դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժողովը կարող է նաև նշված տեղեկատվությունը ստանալ սույն մասում նշված կազմակերպություններից: Աշխատողների աշխատանքի շուկայում վարձատրության միջին չափերը որոշելու համար հիմք է ընդունվում հարկային մարմնի հետ ճշգրտված տեղեկատվությունը.*»: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների վարձատրության մեթոդաբանությունը հաստատում է Հանձնաժողովը:*»: Սույն կարգավորումներին համահունչ Նախագծերի փաթեթում ներառված «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացնել նոր 14.6-րդ հոդված, ըստ որի Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների վարձատրությունը սահմանում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմինը: Նշված դրույթի և «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծով նախատեսված կարգավորումների համադրության արդյունքում ստացվում է՝ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմինը ինքն է հաստատում իր ծառայողների վարձատրությունը: Նշված դրույթը հակասում է ոչ միայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված վարձատրության նույնական մոտեցմանը,

այլև «Հանրային ծառայության մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին, որի համաձայն՝ «*Յուրաքանչյուր հանրային պաշտոն զբաղեցնող անձ և հանրային ծառայող առանց որևէ խտրականության ունի օրենքով սահմանված չափով վարձատրության իրավունք*: Նշված դրույթի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ հանրային ծառայողի վարձատրության չափը պետք է սահմանվի բացառապես օրենքով՝ պահպանելով խտրականության արգելքի սկզբունքը: Բացի այդ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 1-ին հոդվաով հստակ սահմանված է որ «*Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, պետական մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վարձատրության սկզբունքները, կարգավորվում են նրանց հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի, պարգեւատրման, դրամական օգնության կազմակերպման և վարձատրության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են հենց «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով*:

19. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է Հանձնաժողովի դռնփակ նիստ գումարելու հնարավորությունը, սակայն բացակայում են այդ գործընթացի կարգավորման ընթացակարգային հարցերի պատասխանները, մասնավորապես՝ ինչ հանգամանքներ կարող են պատճառ դառնալ նիստը դռնփակ անցկացնելու համար, ինչ ընթացակարգով է կայացվում նման որոշում և այլն: Առաջարկում ենք «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 17-րդ հոդվածում նախատեսել նաև համապատասխան կարգավորումներ՝ ապահովելով իրավական որոշակիությունը:

20. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են հինգ աշխատանքային օրվա ժամկետում ներկայացնել Հանձնաժողովի օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տվյալներ, նյութեր և տեղեկություններ, եթե նշված տվյալները, նյութերը և տեղեկությունները պահանջելու մասին Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ*»: Այս կարգավորումը

ենթադրում է ցանակացած տեսակի տեղեկատվության տրամադրում Հանձնաժողովին, այդ թվում՝ այնպիսի տեղեկատվության, որի տրամադրումն արգելված է օրենքով կամ կարող է թույլատրվել միայն դատական ակտի հիման վրա: Մինչդեռ «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի 9-13.6-րդ հոդվածների կարգավորումների շրջանակում չի կարող բանկային գաղտնիքը տրամադրվել Հանձանձժողովին: Արձանագրելով, որ այս օրենքի և «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասի միջև առկա է հակասություն առաջարկում ենք այն վերանայել՝ հաշվի առնելով նաև այլ համանման օրենքներում տեղեկությունների տրամադրման սահմանափակումների առկայության հնարավորությունը:

21. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին հղում կատարելիս առաջարկում ենք «օրենքով» բառին նախորդող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ «*Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը*»:

22. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 28-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը առաջարկում ենք տեղերով միմյանց հետ փոխել՝ մտքի տրամաբանական հաջորդականությունը ապահովելու նպատակով:

23. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 28-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը առաջարկում ենք համապատասխանեցնել նույն հոդվածի 5-րդ մասին, ըստ որի՝ համապատասխանության գնահատումն իրականացնում է Հանձնաժողովի կողմից ստեղծվող համապատասխանության գնահատում իրականացնելու համար լիազորված խումբը և ոչ Հանձնաժողովը:

24. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասում կրկնվում է «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, ինչը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-ին մասին, ըստ որի՝ «*Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները* »:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 40-րդ հոդվածի 3-րդ մասին, որով նախատեսվող կարգավորումները արդեն իսկ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասում նախատեսված են:

25. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 61-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ «***Հանձնաժողովը սույն օրենքի ընդունման պահից հետո 1 տարվա ընթացքում մշակում,*** *Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջոցով* ***շրջանառության մեջ է դնում*** *սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման արդյունքում պետական բյուջե մուծվող պետական տուրքերի կամ այլ պարտադիր վճարների գանձման դեպքերի, կարգի և չափերի կարգավորման մասին* ***օրենսդրական ակտերի փաթեթ.***»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսվում են այն կարգավորումները, որոնք կարող են սահմանվել նորմատիվ իրավական ակտի անցումային դրույթներով: Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ այդ կարգավորումները լինում են՝

– օրենքի նախագծով նախատեսվող առանձին կարգավորումների ուժի մեջ մտնելու առանձին ժամկետների և պայմանների վերաբերյալ,

–նորմատիվ իրավական ակտի կատարումն ապահովող ենթաօրենդրական նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ ցանկանում ենք փաստել, որ «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 61-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսվող օրենսդրական փաթեթ շրջանառելու վերաբերյալ հանձնարարությունը չունի այնպիսի բնույթ, որը կհամապատասխանի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի նկարագրին: Սույն դիտարկման հիման վրա առաջարկում ենք վերանայել «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 61-րդ հոդվածի 13-րդ մասը:

26. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի, «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի

նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներով առաջնորդվելով՝ առաջարկում ենք նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքին հղում կատարելիս հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:

27. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը առաջարկում ենք փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով, քանզի «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում են մեկից ավելի փոփոխություն, իսկ նորմատիվ իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի վերջինիս բովանդակությանը:

28. «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)», «/այսուհետ՝ Օրենք/» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծում և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում «Պետական գաղտնիքի մասին» օրենքին և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:

29. «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք «այսուհետ՝ Օրենք» բառերը գրել փակագծերում քանզի «/» նշանի օգտագործումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով նախատեսված չէ:

30. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսվող «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 7-րդ և 19-րդ հոդվածում լրացումներ կատարելիս առաջարկում ենք հղում կատարել «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծին, քանզի ինքնավար մարմին նախատեսվում է հենց այդ օրենքի նախագծով և ոչ թե «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծով:

31. «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել ոչ թե «տեղեկատվական համակարգ» հասկացությունը, այլ համապատասխան չհամարկալված պարբերությունը, ինչպես նշվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում:

32. «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 15-րդ հոդվածում լրացվող նոր 1.2-րդ մասի համարը տեքստից առաջարկում ենք բաժանել միջակետով՝ ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի, այն է՝ «*Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով*»:

33. «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 15-րդ հոդվածում նոր լրացվող 1.2-րդ մասում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը առ այն՝ «*Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:*» և օգտագործել «Կառավարության» ձևակերպումը:

34. «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում օգտագործվող

մարմինների անվանումները առաջարկում ենք համապատասխանեցնել Նախագծերի փաթեթում ընդգրկված օրենքների նախագծերով նախատեսված մարմինների անվանումներին:

35. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.17-րդ հոդվածի 6-րդ մասի «Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները.» բառերը հանել: Հարկ ենք համարում նշել, որ սույն փոփոխության հետ միաժամանակ անհրաժեշտ է նաև նույն դրույթում կիրառված «կենսաչափական» բառը փոփոխել՝ այն դարձնել մեծատառով սկսվող:

36. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 189.31-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվում է պատասխանատվություն տեղեկատվական համակարգերում տվյալներ կամ տեղեկություններ մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող միջոցառումներ չիրականացնելու համար:

Հարկ ենք համարում նշել, որ «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծում բացակայում են այն միջոցառումների ցանկը, որոնք ենթակա են պարտադիր կատարման և կարող են նույնացվել որպես տեղեկատվական համակարգերում տվյալներ կամ տեղեկություններ մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող միջոցառումներ, ինչպես նաև բացակայում են այդպիսի միջոցառումները սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի վերաբերյալ դրույթներ: Նախագծով սահմանվում են անվտանգությանը ներկայացվող պահանջներ, անվտանգության ապահովման աշխատանքներ, անվտանգության նվազագույն պահանջներ, սակայն անվտանգությունն ապահովելուն ներկայացվող միջոցառումները որևէ կերպ հնարավոր չէ նույնացնել: Հարկ ենք համարում նշել, որ վարչական պատասխանատվության սահմանման անհրաժեշտ նախապայմաններից է օրենքով հստակ և որոշակի ամրագրված պարտականության գոյությունը: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր անձի համար պետք է հստակ և որոշակի լինի իր վրա դրված պարտականությունը, դրա բովանդակությունը, ինչպես նաև կանխատեսելի լինեն իր վրա

դրված պարտականության չկատարման հետևանքները: Ուստի, առանց օրենքում պարտականության կատարման պահանջի սահմանման, պատասխանատվության սահմանումը կարող է հանգեցնել կամայական միջամտության:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 189.31-րդ հոդվածի 2-րդ մասում տեղեկատվական համակարգերում տվյալներ կամ տեղեկություններ մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող միջոցառումներ չիրականացնելու համար նախատեսված պատասխանատվությունը:

Նույն դիտարկմամբ առաջարկում ենք վերանայել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 189.31-րդ հոդվածի 4-րդ մասում պետական տեղեկատվական համակարգում (ներառյալ տեղեկատվական շտեմարանները) տվյալների մշակման, կառավարման, տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցների կիրառման օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները խախտելու համար նախատեսված պատասխանատվությունը:

37. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 193.4-րդ հոդվածի 5-րդ մասում պատասխանատվություն է սահմանված «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով կիբեռմիջադեպի ծանրության, ձեռնարկված միջոցառուների և կիբեռմիջադեպի ունեցած հետևանքների մասին կազմված հաշվետվությունը տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին չտրամադրելու համար:

Նշված վարչական պատասխանատվության կապակցությամբ հարկ ենք համարում մեջբերել «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում սահմանված դրույթները. «*4. Կիբեռմիջադեպի մասին իրեն հայտնի դառնալուց հետո, 72 ժամվա ընթացքում ծառայություն մատուցողը Ինքնավար մարմին է ներկայացնում*

կիբեռմիջադեպի վերաբերյալ թարմացված ***տեղեկատվություն****՝ ներառյալ կիբեռմիջադեպի ծանրության և ունեցած հետևանքների մասով:*

5. Ինքնավար մարմինը կարող է սեփական հայեցողությամբ ծառայություն մատուցողից պահանջել ներկայացնել թարմացված ***տեղեկատվություն*** *կիբեռմիջադեպի ծանրության, ձեռնարկված միջոցառումների և ունեցած հետևանքների մասին:*»:

Վերը մեջբերված դրույթներից բխում է, որ ծառայություն մատուցողն Ինքնավար մարմնին ներկայացնում է տեղեկատվություն, ոչ թե հաշվետվություն: Հետևաբար օրենքում սահմանվող պարտականությունը և դրա կատարման ապահովմանն ուղղված վարչական պատասխանատվություն նախատեսող դրույթը, կարծում ենք՝ պետք է հապատասխանեցնել միմյանց՝ իրավական որոշակիության ապահովման նպատակով: Սույն առաջարկը կբացառի նաև իրավական շփոթի և տարաբնույթ մեկնաբանությունների առաջացումը:

38. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 171.13-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին, հանձնաժողովի անդամին կամ աշխատակցին օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու համար: Ընդ որում նշված հոդվածում իրավաբանական անձի պաշտոնատար անձի նկատմամբ նախատեսված է բացառապես տուգանքի կիրառումը՝ առանց նախազգուշացման հնարավորության, մինչդեռ նույն գործողության համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձի և ֆիզիկական անձի նկատմամբ նախատեսված է նաև նախազգուշացում: Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորմամբ այս տարբերակված մոտեցումը հիմնավորված չէ: Ուստի առաջարկում ենք վերանայել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 171.13-րդ հոդվածի 1-ին մասը՝ սահմանելով նաև նախազգուշացման կիրառման հնարավորություն իրավաբանական անձի պաշտոնատար անձի նկատմամբ՝ ապահովելու համար համաչափ պատասխանատվություն բոլոր սուբյեկտների նկատմամբ:

39. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի

նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 243.1-ին հոդվածի համարն առաջարկում ենք վերնագրից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված կանոնը, որի համաձայն. «*Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով։*»:

40. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «*Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի։*»:

41. Միաժամանակ նշենք, որ Նախագծերի փաթեթում առկա են մի շարք վրիպակներ, ոչ հստակ ձևակերպումներ, շարադասական սխալներ, լեզվական

անճշտություններ, անհարկի մեծատառերի և չակերտների օգտագործումներ, որոնք շտկման կարիք ունեն:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծերի փաթեթում առկա կարգավորումները կարող են խնդրահարույց լինել իրավական որոշակիության տեսանկյունից:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված դիտարկումների հիման վրա ապահովել Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումների, հիմնավորվածությունը, ինչպես նաև համապատասխանությունը միմյանց, «Հանրային ծառայության մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

Հաշվի առնելով Նախագծերի փաթեթի ծավալը՝ նշենք, որ սույն եզրակացությունը չի բացառում Նախագծերի փաթեթի լրացուցիչ ուսումնասիրության և քննարկման արդյունքում նոր առաջարկությունների, դիտողությունների և եզրահանգումների ներկայացում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարողներ՝ Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)
Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)
09.09.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության մասին

«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով Հանձնաժողովը լիազորվում է օրենքով սահմանված դեպքում դիմել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում

իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում աջակցություն ստանալու նպատակով: Սակայն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ չունեն պարտականություն Հանձնաժողովին աջակցելու, քանզի Նախագծերի փաթեթով լրացում չի կատարվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում համապատասխան պարտականության վերաբերյալ: Ուստի առաջարկում ենք լրացում կատարել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 11-րդ հոդվածում և ապահովել «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի կարգավորման լիարժեքությունը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարողներ՝ Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)
Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)
09.09.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված նախագծերի փաթեթով (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) առաջարկվում է իրավական հիմքեր ստեղծել տեղեկատվական արդյունավետ համակարգերի ստեղծմամբ և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով միջազգային չափանիշներին բավարարող թվային ծառայությունների մատուցման համար: Մասնավորապես, նախատեսվում է՝

- պետական կառավարման համակարգի մարմինների միջև ապահովել տվյալների միասնական օգտագործման գործուն համակարգ (փոխգործելիություն), կիրառելով տվյալների հավաքագրման «մեկանգամյա» սկզբունքը,
- ապահովել պետական տեղեկատվական համակարգի քաղաքականության մշակման, իրականացման, վերահսկողության և հսկողության միասնական համակարգի ներդրում,
- ապահովել պետական տեղեկատվական համակարգի կառավարման թվային տեխնոլոգիաների ներդրման ինստիտուցիոնալ մեխանիզմների մշակում, թվայնացման

ստանդարտների մշակում և ներդրում, անվտանգության չափանիշների ներդրում, միասնական հենքի կիրառում,

- թվայնացման միջոցով նպաստել պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը և հասանելիության բարձրացմանը,

- ձևավորել և սպասարկել պետական ծառայությունների միասնական հարթակ, ապահովել թվայնացման նախագծերի տեխնիկական վերահսկողություն, թվային լուծումների թեստավորում, ստանդարտների և պահանջների համապատասխանության ստուգում,

- ստեղծել ինքնավար մարմնի կարգավիճակով նոր պետական մարմին՝ Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողով, որի ձևավորման հիմքում դրվելու է մասնագիտական անկախության, կայացված որոշումների վերաբերյալ մասնագիտական իմունիտետ ունենալու և քաղաքական ազդեցություններից զերծ մնալու սկզբունքները և այլն:

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում, սակայն հարկ ենք համարում նշել, որ փաթեթի հիմնավորման մեջ նշված պետական բյուջեի ծախսերից բացի (Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի ստեղծման հետ կապված), որոշակի ծախսային բեռ կավելանա նաև կենսական նշանակության ոլորտներում կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների կամ տեղեկատվական համակարգերի կիբեռանվտանգության ապահովման հետ կապված ծառայություններ մատուցող սուբյեկտների համար՝ կապված կիբեռանվտանգության ապահովման, օրենքով սահմանված պահանջների բավարարման, համապատասխան միջոցառումների ֆինանսավորման և ծառայություն մատուցողի կիբեռանվտանգության աուդիտի անցկացման հետ կապված ծախսերի ավելացման հետ:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ
(հեռ.՝ 011 513-668)
27.08.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Կառավարության կողմից ներկայացվել են «Կիբեռանվտանգության մասին», «Հանրային տեղեկությունների մասին», «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքների նախագծերը և մի շարք հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ):

Նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է պետության անվտանգության և տնտեսության բնականոն կենսագործունեության համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկատվական համակարգերում և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներում (այդ թվում՝ ֆինանսական, բանկային, հեռահաղորդակցության, էներգետիկ, առողջապահական և այլ կենսական նշանակության ոլորտներում գտնվող համակարգերում) տեղի ունեցող կիբեռմիջադեպերի կանխարգելման և լուծման, դրանց ազդեցության մեղմացման, հետևանքների վերացման անհրաժեշտությամբ: Այն մեծապես կնպաստի կիբեռանվտանգության ոլորտում պետական համալիր քաղաքականության և գործողությունների ծրագրի մշակմանը, կիբեռանվտանգության մարտահրավերների և ռիսկերի գույքագրմանը և դրանց դասակարգմանը, կիբեռմիջադեպերին արձագանքման համակարգված միջոցառումների և սկզբունքների սահմանմանը, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ կիբեռանվտանգության ապահովման ուժեղացմանը, լրացուցիչ գործողությունների պլանի և համապատասխան սցենարների մշակմանը, դերերի և պատասխանատվության շրջանակի հստակեցմանը, հասարակության լայն շրջանակների իրազեկման և կիբեռգրագիտության մակարդակի բարձրացմանը միտված ծրագրերի իրականացմանը:

Ակնկալվում է, որ Նախագծերի փաթեթի ընդունմամբ իրավական հիմքեր կստեղծվեն տեղեկատվական արդյունավետ համակարգերի ստեղծմամբ և տեղեկատվական

տեխնոլոգիաների միջոցով միջազգային չափանիշներին բավարարող թվային ծառայությունների մատուցման համար:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը սոցիալական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Մ. Դալլաքյան (հեռ.՝ 011-513-235, 12-35)
09.09.2025թ.